

1720—1775.

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ. ՍԱՐԱՖԵԱՆ

Ե Ի Ի Ի Ր Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

Ցեղեկոս/թիւեր:

Երբ Բաբգէն Վ.ի հրատարակած “Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի կենսագրութիւնը” (Վիեննա 1904) կարգացի, մտադրութիւնս գրաւեց Կոլոտի աշակերտներէն նշանաւոր անձնաւորութիւն մը, Սարգիս Վ. Սարաֆեան, վաղուց ծանօթ գրեթէ միայն իր հրատարակութիւններովն, երբ մանաւանդ անոր մանրամասն կենսագրութեան գոյութիւնը կը ծանուցանէր բանասէր վարդապետը (էջ 202, 218): Անտարակոյս շատ նոր տեղեկութիւններ ամփոփած պիտի ըլլար սոյն կենսագրութիւնը՝ Սարգսի եւ իւր ժամանակին գէպքերուն վրայ:

Այս կենսագրութիւնը կը պահուի Անտոնեան Թարգելի Միաբանութեան Միջազգիւղի (Կ. Պոլիս) վանքը: Իմ խնդրանքս՝ եւ բարեհաճ թոյլտուութեամբ ազնուամիտ Գերապայծառ Աբրահամ Գերլ. Միասէրեան Հ. Ռափայէլ Թ.